

բաղձանքը՝ այս անգամ՝ որտեղից պատկելի զայն :
Պէտք է վարձատրել անձնուէրն ու երախտաւորը, որպէս զի քաջախիբին ուրիշներն ալ և անձնուէրներու ու երախտաւորներու թիւը աւելնաց մեր Ազգին մէջ :

Երխտակէս Արբազանին համար բաւական վարձատրութիւն չէ 1000 զուբուշ աւսականը, բայց մեծ բան մ'է ազգին գրամական արդի վիճակին հետ բողբոջամամբ :

Թող պարծի Երխտակէս Արբազանը և մխիթարուի, որովհետեւ իւր սիրելի ազգն է, որ այս վարձատրութիւնը կրնէ. թող մխիթարուի և ուրախ ըլլայ Երխտակէս Արբազանը, որովհետեւ այս առաջին անգամն է, որ աղքատ իւր կեղերնական սնտուկէն այսպէս հանդիսաւոր կերպով ամսական կ'որոշէ իւր մէկ անձնուէր կղերականին համար : Ազգովին եղած այս վարձատրութիւնը մեծ է — Երխտակէս Արբազանը՝ այս մեծ կղերականը կզղայ այս վարձատրութեան մեծութիւնը :

Փունջ. թիւ 446 :

Երգութեան և կառնամանքներէ կը տեղեկանանք որ՝ Ամեն. Ս. Պատրիարքը Երգութեան մէջ, Բ. Խամայիլ Փաշային հետ հացկերոյթ ըրած ատեն՝ Երգութեան մէջ աղջկանց վարժարանի մը պէտքին խօսքը կը բացուի, սեղանակից ազգայիններէն Մեծ. Փասարիստեան Խաչատուր Էֆէնտին ասանկ վարժարանի մը շէնքին ինպատ 1500 և Մեծ. Պալարեան Էֆէնտի 750 ոսկի նուիրել կը խոստանան, որոց կերաշխաւորէ Խամայիլ փաշան :

Այս լուրը որ արժանահաւատ աղբիւրէ մը խմբացած ենք՝ թէ մեր Խորիմեան Արբազանին և թէ վերոյիշեալ ազգայնոց արդէն ունեցած արժանիքը սղ տակէն կը բարձրացնեն :

Հայոց մէջ մեր այսօրուան վիճակին նախկնով այն մարդն է մեծը՝ որ աղջկանց վարժարան մը հիմնելու և կառավարելու կը նուիրէ զինքը :

Օրացիր, թիւ 30 :

ՀԱՆԳԷՍ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԳԵՐ. ԽՐԻՄԵԱՆԻ Ի ՊՕԼԻՍ :

Երէկ մինչդեռ Խառն ժողովը Պալարթիոյ խորհրդարանը դումարուած էր, յանկարծ առ Ս. Պատրիարքն հրաւիրակ դացող կասախճիներէն մին սենեկէն ներս մըտնելով աւետից Ամեն. Խորիմեան Արբազան Պատրիարքի շնորհաբեր գալուստը :

Անմիջապէս հոն դանուող կախկողոսներէն Պ. Ս. Սեթեան և Պ. Եհապետեան սրբազանները, և պատրիարքական փոխանորդ Ս. Հայրը շոգնաւ գացին, նոյնպէս Տնտեսական խորհրդոյ Ետեմապետ և ուրիշ մեծարաց անձինք գացին ի դիմաց Խառն ժողովոյ ծանուցանելու, որ շոգնաւ ուղղակի Պալարթիոյ պիտի ելլայ. և Խառն ժողովն ալ անմիջապէս ի Պատրիարքարան իջաւ ժամը 7-ին :

Շոգնաւին մէջ Արբազան Պատրիարքին մեծ պատուներ տրուել են. վերոյիշեալ կախկողոսք, Վարին Ամենապատուութեան քով նստած և արժանապատիւ Վարեղին, Եմբրոսիոս և Յովհաննէս վարդապետք վեղարազկեստ ոտքի վրայ կայնած էին, նոյն միջոցին քանի մ'անձինք յատկապէս Նորին Բ. Արբազնութեան երանուէս գալուստը շնորհաւորելով ձեռքն համբուրեցին :

Պ. Ս. Սեթեան կախկողոս, Երուսաղեմաց փոխանորդ Պ. Ս. Խորէն վարդապետ և Երթ. Փիլիպպոս վարդապետ ժամն ինն ու կէսին միջոցները Պալարթիոյ պատուամատոյցէն արքունական նաւակ մը նստելով շոգնաւը գացին՝ որ քիչ մը հեռուն